ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> հունվարի 2017 թվականի N16-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N:28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի հունվարի 17-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին>> N:26-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի փետրվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Արթիկի, Ախուրյանի, Մարալիկի, Ամասիայի և Աշոցքի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի մարտի 20-ի թիվ 35/1 Կ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N:28-Ա որոշման N 1-27 հավելվածների 10-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և ընտանիքների անապահովության գնահատման <<Նպաստ>>, սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ.>>:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է